

**Նախնական զինվորական պատրաստություն և անվտանգ կենսագործունեություն
առարկայի օլիմպիադա 2018թ.
ՄԱՐԶԱՅԻՆ/ՔԱՂԱՔԱՅԻՆ/ ՓՈՒԼ
8 - րդ դասարան**

Տևողությունը՝ 120 րոպե:

Գնահատումը կատարվում է 20 միավորանոց համակարգով:

Տեստային առաջադրանքին տրված ճիշտ պատասխանը գնահատվում է 1 (մեկ) միավոր, իսկ գրավոր առաջադրանքին՝ 0.5 (կես) միավոր:

1. Դեռևս հին դարերում բանակի գերագույն գլխավոր հրամանատարը՝

ա) Սպարապետն էր

բ) Հազարապետն էր

գ) Թագավորն էր

դ) Հարյուրապետն էր

2. Հայաստանի Հանրապետության պետական զինանշանի հեղինակներն են՝

ա) Ճարտարապետ Խաչիկ Անեցին և Թորոս Ռոսլինը

գ) Ճարտարապետ Լևոն Կյուրեղյան և նկարիչ Մարտիրոս Սարյան

բ) Ճարտարապետ Ալեքսանդր Թամանյանը և նկարիչ Հակոբ Կոջոյանը

դ) Ճարտարապետ Երվանդ Քոչար և նկարիչ Մինաս Ավետիսյան

3. Ըստ կտրտվածության աստիճանի տեղանքը լինում է.

ա) թույլ, միջին և խիստ կտրտված,

բ) թույլ, միջին և կտրտված,

գ) միջին և խիստ կտրտված,

դ) խիստ կտրտված և թույլ:

4. Ի՞նչ է կողմնացույցը:

ա) Կողմնացույցը պարզագույն սարք է, որով որոշում են Հյուսիսը, հարավը, Արևելքը և Արևմուտքը:

բ) Կողմնացույցը պարզագույն սարք է՝ հորիզոնի կողմերը կամ կոմնորոշիչի ուղղությունը որոշելու համար:

գ) Կողմնացույցը բարդ սարքավորում է՝ հորիզոնի կողմերը կամ կողմնորոշիչների ուղղությունը որոշելու համար:

դ) Կողմնացույցը պարզագույն սարք է՝ առարկաների դիրքերը և հեռավորությունները որոշելու համար:

5. Քանի՞ կանոնադրություն ունի ՀՀ զինված ուժերը.

- ա) 1 գ) 3
բ) 2 դ) 4

6. Հրաձգության կանոնների յուրացումը պարտադիր պայման է մարտում զենքը՝

- ա) գրագետ օգտագործելու նպատակով,
բ) ճիշտ օգտագործելու համար,
գ) անփորձանք օգտագործելու նպատակով,
դ) անվտանգ օգտագործելու նպատակով:

7. Հարձակման ժամանակ յուրաքանչյուր զինվոր պետք է ցուցաբերի .

- ա) Համարձակություն և քաջություն գ) Արիություն և քաջություն
բ) Համարձակություն, դ) Համարձակություն և արիություն
խիզախություն

8. Շարքի ճակատի հակադիր կողմը կոչվում է՝

- ա) Ետնակողմ գ) Թև
բ) Թիկունք դ) Ետնամաս

9. Հարձակման վճռական պահը՝

- ա) կործանելն է:
բ) հարվածելն է:
գ) գրոհն է:
դ) սրընթաց հարձակվելն է:

10. Առաջին և վերջին տողաններում կանգնած զինծառայողների միջև եղած հեռավորությունը կոչվում է՝

- ա) Շարքի լայնություն : գ) Շարքի երկարություն:
բ) Շարքի խորություն: դ) Շարքի հեռավորություն:

11. Կրակային պատրաստությունը ընդգրկում է՝

Ձենքի նյութական մասի, հրաձգության հիմունքների, ձևերի ու կանոնների, մարտի դաշտում հեռավորության որոշման, ձեռքի նոնակների նետման ուսուցումը, ինչպես նաև հրաձգության վարժությունների անցկացումը:

12. Բանակը կազմված է՝ մտոհրաձգային զորքերից, տանկային զորքերից, հրթիռահրետանային զորքերից, հակաօդային պաշտպանության զորքերից, ռազմաօդային ուժերից, հատուկ զորքերից և զորամասերից(կապի, հետախուզական, ինժեներական և այլն):

13. Որտե՞ղ պետք է գտնվի զորամասի մարտական դրոշը մարտի ժամանակ:

Մարտի դաշտում զորամասի մարտական դրոշը պետք է գտնվի ռազմական գործողությունների շրջանում. զորամասի ողջ անձնակազմը պարտավոր է արիաբար պաշտպանել այն և բացառել թշնամու կողմից նրա զավթումը:

14. Հորիզոնի կողմերը Արեգակի և ժամացույցի օգնությամբ որոշելու համար անհրաժեշտ է ժամացույցը պահել հորիզոնական դիրքով և պտտել այնպես, որ փոքր սլաքը ուղղված լինի դեպի Արեգակը: Փոքր սլաքի և թվատախտակի <<1>> թվի միջև ընկած անկյունը պետք է մտովի կիսել երկու հավասար մասի: Անկյան կիսորդը ցույց կտա ուղղությունը դեպի հարավ: Մինչև կեսօր (13⁰⁰) թվատախտակի վրա սկսվող անկյունը կլինի <<1>> թվից ձախ, իսկ կեսօրից հետո՝ աջ:

15. Ինչպիսի՞ կարևոր հատկություններ է զարգացնում ռազմական տեղագրության ուսուցումը զինծառայողների մեջ:

Զինծառայողների մեջ զարգացնում է դիտողականությունը, ճշգրտությունը, դիտարկումների արդյունքների և տեղանքի մարտավարական հատկանիշների վերլուծման ու գնահատման ունակությունը

16. Ինչպիսի՞ որակներ է դաստիարակում շարային կեցվածքի ընդունումը զինծառայողների մեջ:

Շարային կեցվածքի ընդունումը զինվորի մեջ դաստիարակում է կուռ կարգապահություն, ուշադրություն, կատարողականություն և այլ հատկանիշներ:

17. Դիտարկման հարմարավետության համար նշված հատվածը ինչպիսի՞ գոտիների է բաժանվում:

Մոտակա, միջին, հեռավոր

18. Հրաձգության ժամանակ պահպանվում են անվտանգության հետևյալ կանոնները.

Պարապմունքից առաջ ղեկավարի հրամանով կամ ինքնուրույն ստուգել՝ լիցքավորված չէ՞, արդյոք զենքը:

Պահեստատուփը լիցքավորելիս ուշադիր հետևել՝ ուսումնական փամփուշտների մեջ չկա՞ն, արդյոք, մարտական փամփուշտներ:

Կտրականապես արգելվում է զենքը ուղղել մարդկանց վրա, անկախ այն բանից լիցքավորված է այն, թե՛ ոչ

19. Հրաձգության ավարտից հետո ինչ են անում չօգտագործված զինամթերքը և զենքը:

Հրաձգության ավարտից հետո հանձնում են չօգտագործված զինամթերքը և զննում զենքը:

20. Ժամանակի առկայության դեպքում անհատական խրամատը պետք է

խորացնել մինչև 60 սմ՝ ծնկած կրակելու համար, ապա մինչև 110 սմ՝ կանգնած կրակելու համար: